ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

04.12.2024 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24Խ/127 գնման պայմանագրի

«29» Հունվար 2026թ.

ք. Մեծամոր

Մեծամորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ. Հովհաննիսյանի, ով գործում է «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 04.12.2024թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24Խ/127 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5, 7.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, 2026 թվականի համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման համար հատկացված ևս 20,000,000.00 (քսան միլիոն) ՀՀ դրամի (Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող) շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի Հավելված N 3-ով և 16.01.2025թ. կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-երը փոփոխել և հաստատել նոր խմբագրությամբ, համաձայն՝ կից ներկայացվող Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարան | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ |
| ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն 4 | ՀՀ, ք. Երևան, Սունդուկյան թ 15ա 26 բն. |
| gnumnermecamor@mail.ru | info@promotion.am |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900332239061 | Հ/Հ 1570005238762300 |
| ՀՎՀՀ 04440608 | ՀՎՀՀ 00190679 |
| Համայնքի ղեկավար | Տնօրեն |
| ______________ Է. Հովհաննիսյան | ______________ Հ. Հովհաննիսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«04» դեկտեմբերի 2024թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24Խ/127 ծածկագրով պայմանագրի*
*«29» հունվարի 2026թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Հ/հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ծառայության անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր գինը |
| | | | | | 2025թ. | | | | | | | | | | | | |
| 1 | 79411210 | Գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայություններ | դրամ | 1 | 1,300,000.00 | 3,000,000.00 | 4,700,000.00 | 6,400,000.00 | 8,100,000.00 | 9,800,000.00 | 11,500,000.00 | 13,200,000.00 | 14,900,000.00 | 16,600,000.00 | 18,300,000.00 | 20,000,000.00 | 40,000,000.00 |
| | | | | | 2026թ. | | | | | | | | | | | | |
| | | | | | 21,300,000.00 | 23,000,000.00 | 24,700,000.00 | 26,400,000.00 | 28,100,000.00 | 29,800,000.00 | 31,500,000.00 | 33,200,000.00 | 34,900,000.00 | 36,600,000.00 | 38,300,000.00 | 40,000,000.00 | |
| **Ընդհամենը՝** | | | | | **40,000,000.00** | | | | | | | | | | | | |

* Ծանոթություն. Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Մեծամորի համայնքապետարանի հրապարակված, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով: Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարան | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ |
| ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն 4 | ՀՀ, ք. Երևան, Սունդուկյան թ 15ա 26 բն. |
| gnumnermecamor@mail.ru | info@promotion.am |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900332239061 | Հ/Հ 1570005238762300 |
| ՀՎՀՀ 04440608 | ՀՎՀՀ 00190679 |
| Համայնքի ղեկավար ____ Է. Հովհաննիսյան | Տնօրեն՝ ____ Հ. Հովհաննիսյան |
| /ստորագրություն/ Կ.Տ. | /ստորագրություն/ Կ.Տ. |